

# ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՏՈՐ ՄԸ

*Posted on January 6, 2021 by Keghart*



Category: [Opinions](#)



**«Հայկական Մարզադարան», հեղ. ԱԼԵՏԻԻՍ Բայրամեան, Լոս Անճելըս, 2020**

**Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 6 Յունուար 2021**

860 մեծադիր էջնոց գիրք մը՝ նուիրուած հայկական մարզաշխարհի բոլոր հերոսներուն եւ հերոսուհիներուն, լոյս տեսաւ Սեպտեմբեր-Նոյեմբեր Արցախեան պատեազմի թեժ օրերուն: Հերոսական արարքներու, սիրագործումներու, նահանջներու եւ ողբերգական բռն ղեպքերու օրերուն միխթարանքի մը պէս եկաւ ԱԼԵՏԻԻՍ Բայրամեանի վիթխարի աշխատութիւնը:

Հեղինակը մասնագիտութեամբ քիմիական արտադրութեան մեքենաներու եւ սարքերու մասնագետ է, նախքան Հայաստանէն ԱՄՆ փոխադրուելը եղած է դասախօս գիտական զանազան հաստատութիւններէ ներս: Մասնագիտութեան կողքին, որպէս ծնած օրէն մարզասէր, եղած է Հայաստանի ամենէն տարածուն՝ «Հայաստանի ֆիկուլտուրնիկ» (Հայաստանի մարմնամարզիկ) թերթի ֆուլթայլային վիճակագիրը (statistician): Լոս Անճելըս փոխադրուելէ ետք ստանձնած է ՌԱԿ Արեւմտեան ԱՄՆ-ի «Նոր Օր» պաշտօնաթերթի մարզական բաժնի գլխաւոր թղթակցի պարտականութիւնը: 2005-ին հրատարակած է «Մարզաշխարհի անուանի հայերը», ապա 2012-ին «Հայկական մարզադարան, Ա.» գիրքերը, իսկ 2008-էն սկսեալ պարբերաբար ելոյթներ կ'ունենայ Լոս Անճելըսի «Կարօ սպոր շօ» մարզական հեռուստաժամէն:



80-ը բոլորած ԱԼԵՏԻԻՍ Բայրամեանին մէջ կ'ապրի երիտասարդ մարզիկի մը սիրտը եւ մարզաշխարհի տարերքով ապրող խանդավառ մարդու մը հոգին: Արդարեւ, հեղինակը հանրագիտարանային մօտեցումով աշխարհի բոլոր երկիրներու մէջ փայլած ու փայլող հայ երկսեռ մարզիկներու անցած կեանքին իւրաքանչիւր մանրամասնութեան մասին կուտակած է վիթխարի տեղեկութիւններ: Ապշիլ կարելի է պարզապէս, երբ կը հանդիպիս մարզիկներու, որոնց մասին հայ մամուլը գրեթէ ոչինչ ըսած է, բայց յանկարծ կը պարզուի որ իր ատենին հայ մարզիկը հպարտութիւնը եղած է իր բնական երկրի ժողովուրդին:

Այսպէս օրինակ, հեծանիւի մարզաձեւին մէջ Բուլ Քրիստոֆ (մօր կողմէ հայ), ծնած՝ Լիոն, 1967-ին հինգ անգամ եղած է Ֆրանսայի երիտասարդներու ախոյեան, 1993-ին աշխարհի ախոյեան (Էյնստիովէն), 1999-ին աշխարհի առաջնութեան մէջ գրաւած է 4-րդ տեղը:

Թերթատելով բազմահատոր այս գիրքը սրտի կսկիծով աչքիդ կը զարնեն անուանի

մարզիկներ, որոնք միջազգային մրցազարդերու ժամանակ բարձրացուցած են թշնամի երկիրներու Թուրքիայի (Օսմանեան եւ հանրապետական) եւ Ազրայեճանի դրօշները, մարզիկներ, որոնց մասին այդ անշնորհակալ երկիրներու պատկան մարմինները կա՛մ չեն նշած անոնց հայկական ծագումը կամ առհասարակ ուրացած են անոնց գոյութիւնը...



Հայու դժիւեմ ճակատագրի բերումով հայ մարզիկներ թե՛ իրենց ծնած եւ կամ ապրած երկիրներու մէջ դարձած են պանծալի անուններ, հերոսներ, մարզաշխարհի դէմքեր, որոնք բարձր պահած են հայու անունը: Այս իմաստով կարելի է հաստատ կերպով ըսել թէ մենք երախտապարտ կը մնանք ԱԼԵՏԻՍ Բայրամեանի կատարած անգնահատելի գործին հանդէպ: Երանի՛ մեր մարզական կազմակերպութիւնները կամ մարզաշխարհով հետաքրքրուող ունեւոր հայորդիները քաջալերէին հեղինակը, որպէսզի այս գիրքը թարգմանուէր գոնէ անգլերէնի, այդպիսով կարելի կը դառնար մեր ազգի ախոյեան զաւակներու անունները տարածել նաեւ համացանցէն ներս:

*(\*) Գիրքէն ունենալու համար դիմել հետեւեալ հասցէին եւ հեռաձայններուն.*

*Avetis Bayramian  
11719 Riverside Dr. # B  
Valley Village, CA 91607  
Tel. 1(818) 281-6549 cell.  
1(818) 762-6249  
[avetisbb41@gmail.com](mailto:avetisbb41@gmail.com)*

**There are no comments yet.**